

Գլուխ 10

Համակարգիչները Ձեզ համար աշխատեցնելը

Ներածություն

1. Նորին մեծություն համակարգիչը
 2. Լազերային սակավառակ (CD-ROM)
 3. Միջազգային ցանցի (InterNet) մասին
 - 3.1 Ինչպես կարող եմ միանալ Միջազգային ցանցին և ընտրել ծառայությունների մատակարար
 - 3.2 Ինչ սարքավորումների կարիք ես ունեմ
 - 3.3 Ինչպես պարզել ծրագրային կարիքները
 - 3.4 Միջազգային ցանցի մատակարարների գնահատումն ու համեմատումը
 4. Էլեկտրոնային փոստ
 - 4.1 Էլ-փոստի հիմնական գործողությունները
 - 4.2 Էլ-փոստի հասցեների բացատրությունը
 - 4.3 Էլ-փոստի վարքականոնները
 - 4.4 Նամականու ցանկերը (mailing lists)
 5. Աշխարհասփյուռ հանգույցներ
 - 5.1 Տեղեկատվությունը համացանցի հանգույցներում
 - 5.2 Համացանցի հանգույցների հասցեների բացատրությունը
 6. Որոնումը աշխարհասփյուռ հանգույցներում
 - 6.1 Հասցեների մուտքագրումն ու հայտնաբերումը
 - 6.2 Որոնման համակարգերի օգտագործումը
 - 6.3 Որոնում
 - 6.4 Բանալի բառերի նշումը
 - 6.5 Որոնման հիմնական գործողությունները
 - 6.6 Հղումները
 - 6.7 Որոնման հնարավորն ու անհնարը
 7. Միջազգային ցանցի տվյալների պահպանումը
 - 7.1 Էջանշում
 - 7.2 Միջազգային ցանցի տեղեկատվության պահպանում
 8. Էլեկտրոնային աղբյուրների օգտագործման թերությունները
 9. Տեխնիկական դժվարություններ
 10. Անվտանգությունը միջազգային ցանցում
 11. Խորհուրդներ տեղեկատվության էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու համար
 12. Օգտակար հանգույցներ
- Բացատրական բառարան

Ներածություն

Համակարգիչն այն հիմնական սարքն է, որը կապելու է Ձեզ և հեռակենտրոնի այլ օգտվողներին Միջազգային ցանցի հետ, որտեղ Դուք կարող եք լրացուցիչ կապվել ամնչվող ու օգտակար տեղեկատվության աղբյուրի, Ձեր բարեկամներին, ընկերներին և գործընկերներին, որոնք շատ հեռու են:

Համակարգիչը հզոր էլեկտրոնային գործիք է, որը կարող Ձեզ օժանդակել նաև Ձեր դրամական միջոցների և հեռակենտրոնի ամենօրյա կառավարման խնդիրների վերահսկելուն: Աշխատանքները, ինչպիսիք են նամակների կամ դրամաշնորհների նախագծեր գրելը և բացիկների և հեռակենտրոնի ծառայությունները տեղի համայնքին գովազդող ձևերի մշակումը կարող են շատ դյուրին լինել համակարգիչի օգտագործմամբ:

Համակարգչային տեխնոլոգիաները շարունակաբար առաջադիմում են, պարբերաբար նոր համակարգչային հասկացողություններ են ստեղծվում և նույնիսկ, երբեմն, համակարգչային նորությունները կարող են համակարգչային տեխնոլոգիաների մասին շփոթ ստեղծել: Այս գլխում մենք բացատրում են որոշ համակարգչային եզրեր: Ի հավելումն այս գլխի, վերջում մենք ընդգրկել ենք համակարգչային եզրերի համառոտ բառացանկ: Բառացանկը կարճ է, սակայն լավ հիմք է Ձեր համակարգչային առօրյա գործունեության մեջ:

Դուք, հեռակենտրոնի կառավարիչները կամ աշխատակազմը կարող է որոշեք Ձեր համայնքի անդամներին տրամադրել համակարգիչների և Միջազգային ցանցի հնարավորություն: Սա հրաշալի միտք է, սակայն, այս գլխում չենք կենտրոնանա այն բանի վրա, թե ինչքան գանձել այս ծառայությունների համար կամ թե՛ ինչպես դրանք հասանելի դարձնել Ձեր հաճախորդներին: Ավելի շուտ այլ գլուխը կկենտրոնանա այն բանին, թե ինչպես համակարգիչը կարելի է օգտագործել հեռակենտրոնի կառավարիչի և աշխատակազմի կողմից հեռակենտրոնի առօրյա կառավարման համար: Այն նաև կարող է օգտագործվել հեռակենտրոնի աշխատակազմի նոր անդամների և համայնքի մարդկանց ուսուցանելու համակարգիչների և Միջազգային ցանցի օգտագործումը:

Այդ իսկ պատճառով այս գլխի նպատակն է՝

- Օգնել աշխատակազմի անդամներին յուրացնել համակարգչային և S3S համակարգերի որոշ գործիքներ,
- Խորհուրդներ առաջարկել հեռակենտրոնի կառավարման մեջ համակարգիչների և ծրագրերի կիրառման համար,
- Տրամադրել ուսուցման և կողմնորոշման դասընթացների հիմնական նյութերը համայնքի այն մարդկանց, ովքեր ցանկանում են ձեռք բերել տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու ունակություններ:

1. Նորին մեծություն համակարգիչը

Համակարգիչը կազմված է երկու հիմնական մասերից՝ սարքաշարից և ծրագրաշարից (Hard & Soft, Կոշտ և Փափուկ, Միս ու Ոսկոր): Սարքաշարը համակարգիչի ֆիզիկական բաղադրիչներն են և այն իրենից ներկայացնում է համակարգիչի կոշտ սկավառակը, գործավարը, տեսատիպը, ստեղնաշարը, մկնիկը և այլն:

Ծրագրաշարը համակարգիչի հիշող սարքում գրանցված և համակարգիչով գործողություններ իրականացնող ծրագրերն են, որոնք հնարավորություն են ընձեռում Ձեզ շարադրել նամակներ, կազմակերպել բյուջեներ, ստեղծել տեղեկագրեր, աշխատել Միջազգային ցանցում և այլն: Շուկայում գոյություն ունի համակարգչային կիրառական ծրագրերի մեծ ընտրանի: Կիրառական ծրագրաշարը, որն առավելագույնս կկիրառվի, ներառում է խմբագրական և էլեկտրոնային աղյուսակների ծրագրերը: Ահա մի քանի օրինակներ:

Խմբագրական ծրագրեր: Այս ծրագրերն օգտակար են նամակներ, ձեռնարկներ և տեքստեր գրելու և ձևավորելու համար: Ծրագրերն ապահովում են ավանդական գրամեքենայով աշխատանքի ոճ և ունեն տեքստի խմբագրման աշխատանքների լայն հնարավորություններ: Ծրագրերը հնարավորություն են տալիս նաև Ձեր տեքստի մեջ սկարներ ներմուծել: Տարածված խմբագրիչներ են Word, WordPerfect և Works ծրագրերը: Խմբագրական ծրագրերը օգտակար են Ձեր ուսուցման միջոցառումների նյութերի մշակման համար, գրանցելու և մշակելու կարիքների գնահատման տվյալները և գրանցելու Ձեր կենտրոնի շուկայավարման ռազմավարությունն ու աճի պլանները:

Էլեկտրոնային աղյուսակներ: Այս ծրագրերը կիրառվում են հեռակենտրոնի ֆինանսական կայունության որոշման, կառավարչական պարտականությունների իրականացման համար՝ հաշվապահություն, բյուջետի մանրամասնում և դրամական միջոցների գործունեության գրանցում: Այս ծրագրերն ունակ են կատարելու նաև մաթեմատիկական գործողություններ, որոնց շնորհիվ հաշվապահական նպատակներով կատարվող հաշվարկները բավականին պարզեցվում են: Ամենատարածված ծրագիրը դա Excel-ն է, իսկ խորը մասնագիտացված և լայն հնարավորություն է ապահովում Access համակարգը:

Ֆրատարակչական և Ցուցադրության ծրագրեր: Այս տեսակ ծրագրերը կարող են օգտակար լինել ուսուցման և շուկայավարման գործողությունների համար: Նրանք օգտակար են բացիկներ, բրոշյուրներ և ձևեր թողարկելիս, որոնք կարող են օգտագործվել գովազդելու հեռակենտրոնը և նրա ծառայությունները, ինչպես նաև ծառայություններ տրամադրել համայնքին և հաճախորդներին: Տարածված հրատարակչական և ցուցադրությունների ստեղծման ծրագրեր են QuarkXPress, PageMaker, Word, PhotoShop, Corel Draw և Power Point:

2. Լազերային սակվառակ (CD-ROM, Compact Disc - Read Only Memory)

Լազերային սկավառակառ օպտիկական երիզի տեսակ է, որն ունակ է պահելու տեղեկատվության մեծ ծավալներ: Լազերային սկավառակը կարող են հեռակենտրոնի համար լինել տեղեկատվության օգտակար աղբյուր: Լազերային սկավառակներում կարելի է գտնել մի շարք օգտակար ծրագրեր: Ի հավելումն, առողջապահությանը, գյուղատնտեսությանը և կրթությանը առնչվող մասնագիտացված տեղեկատվության մեծ հավաքածուներ առկա են լազերային սկավառակներով: Որոշ հանրագիտարանական հավաքածուներ նույնպես տրամադրվում են լազերային սկավառակներով:

3. Միջազգային ցանցի (InterNet) մասին

Միջազգային ցանցը, որը հաճախ կոչվում է «Յամացանց», տեղեկատվական և հաղորդակցության նպատակներով ամենահաճախ օգտագործվող համակարգչային հանգույցների աշխարհասփյուռ համակարգ է: Գոյություն ունեն Միջազգային ցանցում աշխատելու բազում ծրագրեր և ծառայություններ, որոնք անհատների և կազմակերպությունների միջև տեղեկատվության փոխանակման հնարավորություն են ստեղծում: Նրանք ներառում են էլ-փոստը (e-mail), Յամաշխարհային Յամացանցի Յանգույցները (www - ՅՅՅ), Չրուցարանները (Chat Rooms), Նամականու ցանկերը, (Mailing Lists), Նորությունների խմբերը (News groups) և այլն:

Շատ մարդիկ Միջազգային Ցանց (InterNet) և Յամաշխարհային Յամընդհանուր Ցանց (World Wide Web) արտահայտություններն օգտագործում են միևնույն իմաստով, սակայն իրականում վերջինս Միջազգային-Ցանցի միայն մի մասն է:

Միջազգային ցանցն օգտակար է հեռակենտրոնի կառավարիչին մի շարք պատճառներով՝

- Այն կարող է ընդլայնել տեղեկատվության հասանելիությունը՝ բարելավելու հեռակենտրոնի կառավարումը և մեծացնելու հեռակենտրոնի հաջողությունը, ապահովելու նրա երկարատև ներկայությունը համայնքում:
- Այն կարող է ստեղծել մեծ հեռավորությունների վրա գտնվող գործընկերների և փորձագետների հետ համագործակցության և հաղորդակցության ավելի շատ հնարավորություններ:
- Այն կարող է ընդլայնել տեղեկատվության հասանելիությունը տեղի համայնքի համար և բարելավել տեղի ապրելու չափանիշները: Օրինակ, ինչ որ մեկը կարող է ունակ լինել արագորեն գտնել տեղեկատվություն մոճակների միջոցով տարածվող հիվանդությունների մասին՝ կապվելով աշխարհի փորձագետների հետ:
- Այն կարող է մեծացնել արդյունավետությունը: Օրինակ, Միջազգային ցանցը կարող է մեծացնել այն ծավալը, որով Ձեր տեղի պաշտոնյան կարող է հաղորդակցվել գործընկերների հետ և ստանալ տեղեկատվություն համայնքի անհրաժեշտ ծրագրերի մասին: Այդպիսով աշխատանքը կկատարվի ավելի արագ:

Միջազգային ցանցը հաճախ նկարագրվում է որպես «Էլեկտրոնային» կամ «Թվային»: Սա պայմանավորված է նրանով, որ Միջազգային ցանցը ստեղծված է թվային ներկայացման հիման վրա, երբ տեքստը, նկարները, պատկերը և ձայնը ձևափոխում և ներկայացվում են թվային տվյալներով:

3.1 Ինչպես կարող եմ միանալ Միջազգային ցանցին և ընտրել ծառայությունների մատակարար

Շատ հաճախ օգտվողները Միջազգային ցանցին միանում են մի կազմակերպության միջոցով ում ընդունված է կոչել Միջազգային Ցանցի Ծառայությունների Մատակարար (Internet Service Provider (ISP)), որն ունի ուղիղ համակցում Միջազգային ցանցի հետ: Միջազգային ցանցի համակցման ամենահաճախ հանդիպող տեսակները, որոնք առաջարկում են մատակարարները, դա Անմիջական և Ոչ անմիջական՝ պահել-և-ուղարկելու եղանակներն են:


Միջազգային ցանցի անմիջական համակցումը

Եթե Դուք ունեք Միջազգային ցանցի անմիջական համակցում, Ձեր մատակարարը միացնում է Ձեզ Միջազգային ցանցին օգտագործելով հատուկ կամ հեռախոսային գծեր: Միացման այս տեսակը թույլ է տալիս անմիջականորեն հասանելի լինել Միջազգային ցանցի բոլոր գործիքներին, հասու լինել տեղեկատվությանը և հաղորդակցվել այլոց հետ:

Միջազգային ցանցի ոչ անմիջական համակցումը՝ Պահել-և-Ուղարկելու եղանակը

Այս եղանակը թույլ է տալիս օգտվողներին փոխանակել էլ-փոստը օգտագործելով սովորական հեռախոսային գծերը: Եթե Դուք օգտագործում եք այս համակարգը, ապա Դուք շարադրում և պահպանում եք նամակները Ձեր համակարգիչում մինչև Դուք պատրաստ կլինեք կամ հնարավորություն կունենաք միանալու Ձեր մատակարարին հեռախոսային ձևափոխիչի (modem) միջոցով: Միանալով Ձեր մատակարարին, Դուք խթանում եք հաղորդագրությունների փոխանակումը: Ձեր էլից հաղորդագրությունները փոխանցվում են Ձեր մատակարարին և այնտեղից՝ Միջազգային ցանցին:

Հեռակենտրոն



Ստանում է թվային եղանակով ուղարկող հարցումը մատակարարի կայանից և ուղարկում պահանջված էջը ստացողի հասցեով:

Ձևափոխում է տեսքտային հասցեն թվերի և ուղարկում հարցումը www.Yahoo.Com հանգույցի կայանին:

www.Yahoo.Com հանգույցի կայանից թվային եղանակով ստանում է էջը և ուղարկում ստացողին:




Մենք կարող ենք ցուցադրել էլ-փոստի առաքման գործընթացը ուղարկողից մինչև ստացող հաջորդ նկարում բերված օրինակի միջոցով:

Միջազգային ցանցում որոնման իրականացումը փոքր-ինչ տարբեր է: Այս գործընթացը, որը տևում է վայրկյաններ, նկարագրված է ստորև:

3.2 Ինչ սարքավորումների կարիք ես ունեմ

Գոյություն ունի սարքավորումների երկու հիմնական տեսակ, որոնք Ձեզ անհարժեշտ են Միջազգային ցանցով նամակներ ուղարկել-ստանալիս՝ համակարգիչ և ձևափոխիչ: Ձևափոխիչը (modem) սարք է, որը միացնում է համակարգիչն ու հեռախոսային գծերը և թույլ է տալիս համակարգիչին փոխանցել և ստանալ տվյալներ իր և այլ համակարգիչների միջև: Այն տեղերում, որտեղ գոյություն չունեն հեռախոսային ծառայություններ կամ դրանք անվստահելի են, փոխարինող են հանդես գալիս արբանյակային կամ ռադիո հաղորդակները: Չնայած արբանյակային կապը թանկ տարբերակ է և պահանջում է արբանյակային կայան, ՄԱԿ-ի Տնտեսական Հանձնաժողովը Աֆրիկայում օգտագործում է արբանյակային կապ: Սակայն հիմնականում կապը կլինի հեռախոսային կամ այլ տարբերակներով:

Հեռակեստրոն 1




Պահպանում է ուղարկողի փաստաթղթերն ու հաղորդագրությունները մինչև նրանք ստացվեն:

Ձևափոխում է տեքստային հասցեն թվերի և ուղարկում առաքողի հաղորդագրությունը Միջազգային ցանցով դեպի առաքողի կողմից նշված ստացողի հասցեով էլ-փոստի **www.Yahoo.Com** կայանին:



Հեռակեստրոն 2



3.3 Ինչպես պարզել ծրագրային կարիքները

Էլեկտրոնային հաղորդագրություններ ուղարկելիս Ձեզ անհրաժեշտ կլինեն ծրագրեր, որոնք կօժանդակեն Ձեզ կապվել Ձեր Միջազգային ցանցի մատակարարի հետ: Սովորաբար, այս ծրագրերը պարունակվում են հենց համակարգիչի գործողությունների համակարգերում կամ առանձին լազերային սկավառակներում: Հիմնականում, անհրաժեշտ ծրագրերը տրամադրվում են Միջազգային ցանցի մատակարարների կողմից:

3.4 Միջազգային ցանցի մատակարարների գնահատումն ու համեմատումը

Ներկայացնում ենք մատակարարներ ընտրելիս հաշվի առնվող հիմնական չափանիշները՝

- Սարքավորման արժեքը: Օրինակ, ինչ արժե հեռախոսային ձևափոխիչը:
- Ձևափոխիչի արագությունը: Օրինակ, ինչքան է ձևափոխիչի արագությունը: Ինչ արագության ձևափոխիչ պետք է ձեռք բերել 14.4, 28.8, 33.6 ԿԲիթ/վրկ կամ այլ:
- Ծրագրային ապահովումը: Օրինակ, մատակարարը կտրամադրի սկզբնական ծրագրերը:
- Ծառայության արժեքը: Ինչպես են գանձվում վճարները՝ ամսական, տարեկան, թե՛ ժամով: Քանի էլ-փոստարկղ կտրամադրվի, ինչքան անվճար տարածք է տրամադրվում էլ-էջերի տեղադրման համար և այլ:
- Հեռախոսի վարձը: Արդյոք հեռախոսի վարձը առանձին է Միջազգային ցանցի միացման ժամավճարից:
- Աջակցություն: Դժվարության դեպքում ինչպես կարող են կապվել մատակարարի հետ:s
- Բարի համբավն ու փորձը: Ինչպիսին է այլ հաճախորդների վերաբերմունքն այս մատակարարին:
- Գործունեության ժամկետը: Որքան ժամանակ է, որ մատակարարն այս շուկայում գոյություն ունի:

4. Էլեկտրոնային փոստ

Էլ-փոստը (էլեկտրոնային փոստը) էլեկտրոնային հաղորդակցության հիմնական գործիքն է, որը հնարավորություն է տալիս անհատներին էլեկտրոնային տեսքով ուղարկել և ստանալ հաղորդագրություններ: Էլ-փոստի հաղորդագրությունները հիմնականում պարզ տեքստեր են, չնայած որ էլ-փոստը հնարավորություն է տալիս Ձեզ ստանալ տեղեկատվություն ավտոմատացված համակարգչային ծրագրերից, ինչպիսիք են բանկային շտեմարանները, ուղարկել ու ստանալ պատկերի և ձայնի գրառումներ: Գրառումը (File) դա էլեկտրոնային գրառումների և փաստաթղթերի հավաքածու է: Էլ-փոստը կարող լինել անհատն անհատի հետ փոխանակում կամ այն կարող է բաշխվել անհատների մեծ խմբի միաժամանակ սամականու ցանկերի (mailing lists) և քննարկման խմբերի միջոցով:

Գոյություն ունեն էլ-փոստի օգտագործման մի շարք առավելություններ հաղորդակցության այլ ձևերի նկատմամբ: Էլ-փոստով Դուք կարող եք՝

- Արագ պատասխաններ ստանալ Ձեր հարցերին,
- Հաղորդագրություններ ուղարկել մեկ կամ ավելի անձանց միաժամանակ,
- Համեմատաբար էժան հաղորդակցվել,
- Հաղորդագրություններ փոխանակել հարմար ժամանակ (պահի) անկախ ժամային գոտիներից,
- Ուղղակիորեն հաղորդակցվել անհատների հետ, հնարավորություն տալով հարաբերություններին զարգանալու ավելի արագ և բաժանել տեղեկատվությունը մարդկանց ավելի ազատ,
- Խնայել փոստային սամակագրությունն ու խուսափել թղթի վրա տպելու անհրաժեշտությունից,
- Պահպանել տեղեկատվությունը Ձեր համակարգիչում հետագա հղումների կամ օգտագործման համար:
- Մասնակցել էլ-փոստով քննարկումների խմբերին:

4.1 Էլ-փոստի հիմնական գործողությունները

Էլ-փոստարկղներ հեշտությամբ են ստեղծվում: Միջազգային ցանցի մատակարարների մեծ մասը, Միջազգային ցանցի համակցման դեպքում, առաջարկում են էլ-փոստի անվճար ծառայություններ: Էլեկտրոնային էջ-փոստը (Web mail) վերաբերվում է էլ-փոստի անվճար ծառայություններին Միջազգային ցանցում (yahoo.com, hotmail.com, mail.ru):

Ամեն դեպքում, անկախ էլ-փոստի մատակարարի ընտրությունից, Ձեզ մշտապես հասանելի են լինելու էլ-փոստի հետևյալ գործողությունները՝

Ստուգել, ստանալ փոստը (Check mail, Receive mail): Ստանալ էլ-փոստարկղում առկա նոր սամակը: Համակարգչային եզրաբանության մեջ էլ-փոստարկղ նշանակում է սպասարկող հանգույցում տարածք, որտեղ ստացվում և պահպանվում են Ձեր ուղարկվող և ուրիշներից ստացված (դեռևս չստուգված) սամակները:

Ջնջել սամակները (Delete messages): Տեղափոխել նշված սամակը էլեկտրոնային աղբարկղ: Այս գործողությունը նման է սամակը աղբարկղ նետելուն:

Նամակ կազմել (Compose messages): Շարադրել նոր սամակ:

Պատասխանել (Reply): Պատասխանել նշված սամակի հեղինակին:


Ուղղել (Forward): Ուղարկել նշված սամակը մեկ ուրիշին:

Բացել հաջորդ նամակը (Open next message): Բացել Ձեր մտից կամ ելից փոստարկղում գտնվող հերթական նամակը:

Բացել նախորդ նամակը (Open previous message): Բացել Ձեր մտից կամ ելից փոստարկղում գտնվող նախորդ նամակը:

Կցել գրառում (Attach file): Նամակին կցել գրառում:

4.2 Էլ-փոստի հասցեների բացատրությունը



Էլ-փոստի հասցեները նման են ավանդական փոստային հասցեներին: Այն դեպքում, երբ փոստային ծառայությունը օգտագործում է հասցեն որոշելու, թե ուր ուղարկել նամակը, Միջազգային ցանցը, նմանապես, որոշում է ուր ուղարկել էլեկտրոնային հաղորդագրությունը հիմնվելով էլ-փոստի հասցեի վրա:

Էլ-փոստի հասցեները պարունակում են օգտվողի անունը (user-name - մականունը, ծածկանունը), հանգույցի անունը (domain name) և նշանակում, որ ցույց է տալիս կամ առաջնային հանգույցը և կամ երկրի անվանումը: Օրինակ, դիտարկենք հետևյալ հասցեն՝

User @ YourISP.Org .UK

Էլեկտրոնային փոստով հասցեավորման հայտանիշը «@» (Շթ, Ա՝ պոչիկով) նշանն է: Այս նշանը հանդես է գալիս որպես էլ-փոստի հայտանիշ և հասցեի մասերի տրոհիչ:

Նշենք, որ էլ-հասցեներում մեծատառ-փոքրատառ տարբերակումներ չկան և մեծատառ-փոքրատառի կիրառելն ընդամենը էլ-հասցեները մարդու համար ավելի ընկալելի դարձնելու նպատակ ունի:

Օգտվողի անուն User name	Նշվում է @ նշանի ձախ կողմում: Սա մատակարարի կողմից տրամադրված կամ օգտվողի կողմից իր համար ընտրված որպես անվան (մականվան, ծածկանվան) գրառումն է: Սովորաբար օգտվողի անունը կազմվում է անձի անուն-ազգանվան հարմար հապավումից:
Հանգույց կամ կայան Host and/or domain:	@ նշանի անմիջապես աջ մասում գտնվող մասը վերաբերվում է հանգույցի անվանը կամ այն մատակարարի հասցեին, ուր պետք է ուղարկվի նամակը:
Առաջնային հանգույց High level domain	Առաջնային հանգույցը ցույց է տալիս կազմակերպության տեսակը: Օրինակ «.org» նշանակում է կազմակերպություն «.edu» նշանակում է կրթական հաստատություն:
Երկրի հապավումը Country code	Երկրի նշանակումը ցույց է տալիս հասցեատիրոջ երկիրը: Օրինակ «.uk» նշանակում է Միացյալ Թագավորություն: Քենիայի նշանակումը «.ke» է: (Ոչ բոլոր հասցեներում է նշվում երկրի հապավումը:)

4.3 Էլ-փոստի վարքականոսները

Լավ էլ-նամակ գրելու չափանիշներ են՝

1. Նախադասություններն ու պարբերությունները կարճ և իմաստին մոտ շարադրեք:
2. Նամակին պատասխանելիս պահպանեք նամակի սկզբնական գլխագիրը, որպեսզի ստացողը կարողանա հետևել քննարկման թեմային, եթե Դուք հատուկ չեք փոխում մտից նամակի գլխագիրը:
3. Միշտ օգտագործեք նամակին համապատասխան գլխագիր: Դա օգնում է ստացողին արագ նկատել հետաքրքրող նամակն իր փոստարկղում:
4. Ուղարկեք միայն այնպիսի նամականեր, որոնց տարածմանը դեմ չեք: Ցանկացած ուղարկած նամակ կարող է ուղղվել մեկ այլ անձի առանց Ձեր համաձայնության:
5. Խուսափեք մեծատառերով գրելուց, քանզի միջազգային ցանցում այն համարժեք է ԳՈՌԱԼՈՒՆ:
6. Նամակի վեջում ներառեք Ձեր անունը և այլ տեղեկատվություն:
7. Մի կիրառեք կոպիտ, ծաղրական կամ բարոյ հումոր: Առանց դեմ առ դեմ հաղորդակցության Ձեր կատակը կարող է ընկալվել որպես քննադատություն:
8. Մի ելթադրեք, որ մարդիկ հասկանում են Ձեր հղումները, Ձեր երկրի հեռուստատեսությունը, սպորտը կամ ընթացիկ իրադարձությունները:
9. Մի ընդգրկեք Ձեր ստացած նամակի տեքստը պատասխանում, եթե դա անհրաժեշտ չէ: Որքան մեծ է նամակը, այնքան երկար է այն ստանալը: Որքան երկար ստացողը միացված մնա իր մատակարարին, այնքան շատ գումար պետք է վճարի, մասնավորապես՝ զարգացող երկրներում:

4.4 Նամականու ցանկերը (mailing lists)

Նամականու ցանկը մեկ այլ տարբերակ է հաղորդակցվելու մարդկանց մեծ խմբերի հետ: Նամականու ցանկերը հաճախ նաև անվանվում են՝ ցանկեր, նամականու ցանկեր, էլեկտրոնային ցանկեր, Միջազգային ցանցի նամականու ցանկեր, նորությունների կայաններ և այլն:

Նամականու ցանկերը էլեկտրոնային գործիքներ են, որոնց միջոցով մարդկանց մեծ քանակ կարող է միաժամանակ ստանալ կամ փոխանակել նույն տեղեկատվությունը: Գոյություն ունեն մի քանի տեսակներ՝

- Նամականու մեկ ուղղությամբ ցանկեր՝ նորությունների և տեղեկագրերի բաշխման համար,
- Նամականու երկկողմանի ցանկեր՝ բաժանորդների միջև տարբեր թեմաներով քննարկումների համար:

Սովորաբար սրանք բոլորի համար բաց հասարակական ցանկեր են: Նամականու առանձնացված ցանկերը փոքր են և բաց են միայն հրավիրված մասնակիցների համար: Նամականու կայաններն ունեն մի շարք առավելություններ՝

- Թանկարժեք չեն, քանզի կարող են ընթերցվել ցանցից անջատված (off-line) ժամանակ,
- Շատ մարդկանց համար արժեքավոր եղանակ է փոխանակելու իրենց գաղափարներն ու մեկնաբանությունները որոշակի թեմաներով,
- Կարճել աշխարհագրական սահմաններն ու ժամանակային գոտու սահմանափակումները:

Շատ կազմակերպություններ ունեն նամականու ցանկեր բազմաթիվ թեմաներով: <http://www.liszt.com/> հանգույցն ունի ավելի քան 90 000 ցանկ: Դուք և հեռակենտրոնի օգտվողները կարող եմ որոնել այս հանգույցում գտնելու թեմաներ, որոնք առնչվում են հետաքրքրությունների Ձեր շրջանակին:

5. Աշխարհասփյուն հանգույցներ

Աշխարհասփյուն հանգույցների համընդհանուր ցանցը (World Wide Web – WWW – Համաշխարհային Համընդհանուր Ցանց – ՀՀՑ) կազմում են Միջազգային ցանցի որոշակի մասը: Այս մասը կազմված է փաստաթղթերի հավաքածուներից, որոնք կոչվում են Համացանցի էջեր (Web pages):

Հանգույցի էջի ցանկացած հղման տարր կարող է ձևափոխվել մեկ այլ էջի: Այս կապերը կոչվում են հղումներ (hyperlinks): Հղումներով իրար կապված և համացանցում հասանելի էլեկտրոնային էջերի համախումբը կոչվում է Համացանցի Հանգույց (Web Site): Հանգույցը հիմնականում առանձին էջերի հավաքածու է որոշակի թեմայով կամ կազմակերպության մասին: Հանգույցի առաջին էջը կտրամադրի թեմային կամ կազմակերպությանն առնչվող որոշակի տեղեկատվություն: Այս էջերը միմյանց կապված են հղումներով: Հանգույցը կարող է կազմված լինել ցանկացած քանակի իրար հղվող էջերից:

Օրինակ, սննդի մասին հանգույցը կարող է ունենալ էջ, որը բացատրում առողջ դիետայի կարևորությունը: Այլ էջի մի հղումը կարող է բացատրել միայն մրգերի և բանջարեղենի մասին, իսկ մեկ այլ հղում կարող է տանել Ձեզ հացահատիկի մասին էջ և այլն: Այս բոլոր էջերը միասին կազմում են հանգույցը:

Հանգույցի առաջին էջը սովորաբար տալիս է հանգույցը կազմող հիմնական էջերի հղումների ցանկը: Հղումները նաև հնարավորություն են տալիս կապել մի հանգույցը մեկ այլ հանգույցի, որպեսզի հետևելով հղումներին Դուք կարողանաք դիտել այլ էջեր տեղադրված այլ հանգույցներում և նույնիսկ այլ երկրներում:

5.1 Տեղեկատվությունը համացանցի հանգույցներում

Համակարգչային հանգույցներում գոյություն ունի մեծաքանակ տեղեկատվություն, որը նրանց դարձնում է գրադարաններին շատ նման: Այնուամենայնիվ, գոյություն չունեն կանոններ, որոնք կառավարում են տեղեկատվության որակը և թե ով է հրապարակել այն: Տեղեկատվությունը կարող է լինել շատ օգտակար կամ շատ աղքատիկ: Օգտվողն ինքը պետք է ունակ լինի վերլուծել տեղեկատվության հավաստիությունը և որակը:


Համակարգչային հանգույցների տեղեկատվությունը մեծամասամբ թարմ է: Եթե դուք որոնում եք 2003 թ-ի քննարկման թերթիկը, ապա Դուք հավանաբար կգտնեք այն, սակայն դժվար թե հայտնաբերեք 70-ականների օրաթերթը: Դուք նաև կհայտնաբերեք, որ տեղեկատվության գերակշիռ մասը ԱՄՆ-ից է և անգլերեն: Սակայն ներկայումս անախադեպ աճում են նաև ռուսական հանգույցները:

Գոյություն ունեն մի շարք ծրագրեր, որոնցով Դուք կարող եք շրջել-նավարկել Միջազգային ցանցով: Երկու ամենատարածված ցանցախույզերը (browsers) Netscape Communicator և Internet Explorer ծրագրերն են:

5.2 Համացանցի հանգույցների հասցեների բացատրությունը

Հիմնականում համացանցի հանգույցը կամ էջը գտնում են օգտագործելով ՄԱՏ-ը (URL): ՄԱՏ (URL-Uniform Resource Locator)-ը Միացյալ աղբյուրների ցուցիչը, ցույց է տալիս հանգույցի հասցեն համացանցում: Համացանցի ցանկացած տարր ունի իր հասցեն՝ անկախ նրանից դա էջ է, տեքստ, նկար, թե այլ տեղեկատ-

վություն: Այն կազմած է չորս տարբեր բաղադրիչներից: Արձանագրություննից, հանգույցի անունից, ուղուց և գրառման անվանումից: Օրինակ՝



1. Protocol – Արձանագրություն – http:// - Սա տվյալների էլեկտրոնային փոխանակման արձանագրություն է, որով հնարավորություն է տրվում մեկ համակարգից տվյալներ փոխանցել մյուսին: (HTTP – Hyper Text Transfer Protocol):

2. Domain Name – Հանգույցի անուն - www.healthnet.org/– Դա վերաբերվում է այն հանգույցին, որը գրանցված է որպես տվյալ ծառայությունը մատուցող կամ տեղեկատվություն տրամադրող համակարգ: Հանգույցի անունը պատկանում է այն ընկերությանը, որն այդ անունով գրանցել և տնօրինում է հանգույցը: Համացանցում նույն անունով այլ հանգույց չի կարող լինել: Շատ դեպքերում Դուք կհայտնաբերեք, որ հանգույցի անվանումը առնչվում է Միջազգային ցանցի ծառայությունների Ձեր մատակարարին:

3. Directory – Ծրար – programs/ – Հասցեի երրորդ մասն է, որը ցույց է տալիս հանգույցի տվյալների այն ծրարը (ներդրված ծրարները), որում գտնվում են նախատեսված էջերը: Հիմնական (առաջնային) ծրարը, որում գտնվում են տվյալ հանգույցի բոլոր ծրարներն ու տվյալները, նշանակվում է «/» նշանով, իսկ հասցեն՝ **http://www.healthnet.org/** ձևով:

4. File – Գրառում – procor.html – Հասցեի վերջին մասն է: Այս դեպքում այն հենց որոնվող էջն է, սակայն այն նաև կարող լինել նկար կամ ձայնային գրառում: HTML – Hypertext Mark-up Language – դա Միջազգային ցանցում էջերի ներկայացումը ծրագրավորելու պարզ լեզու է, որով և ստեղծվում են էլեկտրոնային էջերը:

Ինչպես կտեսնեք հետագայում, համացանցում որոշակի էջ գտնելու համար Ձեզ անհարժեշտ չի լինի իմանալ այս բոլոր թվարկված մասերը անմիջականորեն:

6. Որոնումը աշխարհասփյուռ հանգույցներում

6.1 Հասցեների մուտքագրումն ու հայտնաբերումը

Հանգույցներում տեղեկատվությունը կարելի է գտնել ցանցախույզ ծրագրում հասցեների համար նախատեսված տողում որոնվող հասցեն նշելու (մուտքագրման) միջոցով:

6.2 Որոնման համակարգերի օգտագործումը

Միջազգային ցանցում որոնման գործիքները կոչվում են որոնման համակարգեր: Նրանք գործում են ճիշտ այնպես, ինչպես գրադարաններում օգտագործվող տեղեկատվության հայթայթման գործիքները կամ քարտադարանները:

Մենք կազմել ենք հանրաժանոթ որոնման համակարգերի և նրանց հասցեների ցանկը: Զանգի տարբեր որոնման համակարգեր ունեն տարբեր ուժեղ և թույլ կողմեր, Դուք հավանաբար կցանկանաք նույն որոնման իրականացման համար կիրառել մի քանի որոնման համակարգեր:

Որոնման համակարգեր	Հասցե
AltaVista	http://www.altavista.com/
Excite	http://www.excite.com/
Google	http://www.google.com/
HotBot	http://www.hotbot.com/
Infoseek	http://www.infoseek.com/
Lycos	http://www.lycos.com/
Yahoo	http://www.yahoo.com/
Yandex	http://www.Yandex.Ru/
Rambler	http://www.Rambler.Ru/
ԲանԲեր	http://www.BanBer.Am/
Ոստ	http://www.Vost.Am/

Ինչպես համացանցի այլ էջեր, այնպես էլ որոնման համակարգերը շարունակաբար փոփոխվում են, քան որ նրանք ևս մշակում են տեղեկատվության որոնման նոր եղանակներ և համակարգեր: Եթե Դուք ընտրում եք հարգված և հայտնի որոնման համակարգեր, ապա մեծ հավանականություն կա, որ այն մշտապես արդի կլինի և լավորակ ծառայություններ տրամադրի Ձեզ:

6.3 Որոնում

1. Ընտրեք որոնման համակարգի էջը: Օրինակ՝ <http://www.altavista.com>:
2. Ընտրեք և մուտքագրեք Ձեր որոնման բանալի բառերը: Օրինակ, եթե Դուք ցանկանում եք որոնել «Աֆրիկա» և «մալարիա» Դուք հավանաբար կմուտքագրեք՝ "Africa and malaria":
3. Սեղմեք «Search», «Seek», «Go» կամ «Բեր» կոճակը (որը որ կիրառելի է):

Որոնման համակարգը կբերի էջեր՝ նշելով գտնված էջերի հասցեները, էջի համառոտ բովանդակությունը: Առաջին տեղերում նշված կլինեն Ձեր բանալի բառերին լավագույնս համապատասխանող էջերի հղումները: Դուք կարող եք օգտվել այս էջերում տեղադրված որևէ մեկ հղումից՝ այցելելու այդ էջը:

6.4 Բանալի բառերի նշումը

Տեղյակ եղեք, որ որոնման համակարգերի մեծամասնությունը ոչ թե թեմատիկ ցանկերով որոնումներ են, այլ բառերով որոնումներ են: Այս տեսակ որոնման համակարգերը փնտրում են ըստ տրված թեմայի բառը կամ բառակապակցությունը պարունակող էջեր:

Որոնումն իրականացնելու համար Դուք պետք է ընտրեք բառ կամ բառակապակցություն (բանալի բառեր, keywords), որոնք նկարագրում են Ձեր ընտրած թեման: Երբ Դուք որոնման համակարգին տալիս եք այդ բառերը, այն փնտրում է մեծաքանակ էջերի տեքստերում հենց այդ բառերը: Որոնումն ավարտելուց հետո համակարգը Ձեզ է տրամադրում այն էջերի հղումների ցանկերը, որտեղ հայտնաբերվել են նշված բառերը:

Երբ իրականացնում եք բանալի բառերով որոնում,

- Դուք կարող եք նշել մեկից ավել բառ՝ շարադրելով մեկը մյուսի ետևից,
- Որքան որոշակի են Ձեր բառերը, այնքան կատարյալ և որոշակի կլինեն Ձեր որոնման արդյունքները:

Օրինակ, Դուք կարող եք հետաքրքրված լինել Զնդկաստանի երիտասարդության առօրյան հետ կապված թեմաներով: Եթե Դուք իրականացնեք որոնում միայն «առողջապահություն» բառով, ապա որոնման համակարգերը Ձեզ կներկայացնեն ավելի քան 12,000 էջեր: Սա անիրական թիվ է կարդալու համար և նրանց մեծ մասը կապված չի լինի Ձեր ցանկալի թեմայի հետ: Այդ իսկ պատճառով Դուք պետք է ճշգրտեք որոնումը:

Դուք կարող եք ավելի ճշտել Ձեր որոնումը օգտագործելով «առողջություն + երիտասարդություն + Զնդկաստան» բառերը: Այս որոնումը Ձեզ կտրամադրի ավելի քիչ, սակայն Ձեր թեմայի հետ ավելի որոշակիորեն կապված արդյունքներ:

Այսպեսով, Դուք պետք է կատարեք Ձեր որոնումը որքան հնարավոր է ճշգրիտ, որպեսզի ստանաք առավելագույնս անչվող տեղեկատվություն հնարավորինս կարճ ժամկետում:

Եթե Ձեր բանալի բառերը պարունակում են «Հարավային Աֆրիկա» կամ «սիրտ անոթային հիվանդություն» ապա պետք է նրանց ընդգրկել " " նշաններով, որպեսզի որոնումը կատարվի բառակապակցություններով և ոչ թե՛ ամեն առանձին բառով:

6.5 Որոնման հիմնական գործողությունները

Չնայած Միջազգային ցանցում գոյություն ունեն մի շարք որոնման համակարգեր, նրանց մեծամասնությունը կատարում է ստորև նկարագրված միևնույն գործողությունները:

Back - Զետ	Ցույց է տալիս որոնման հիշողությունում գտնվող նախկին էջը:
Forward - Առաջ	Ցույց է տալիս որոնման հիշողությունում գտնվող հաջորդ էջը
Home - Սկիզբ	Ցույց է տալիս տվյալ հանգույցի առաջին էջը:
Search - Որոնում	Ցույց է տալիս էջ որտեղից կարելի է գնալ որոնման համակարգերի էջերը կամ ստանալ որոնման այլ ծառայություններ:
Print - Տպել	Տպում է ընթացիկ էջը:
Security - Անվտանգ	Հղվում է անվտանգ աշխատելուն վերաբերվող նյութի էջին:
Stop - Կասեցում, Ընդհատում, Կանգ	Կասեցնել ընթացիկ որոնումը կամ տեղեկատվության ստացումը:

Միջազգային ցանցով նավարկելու հիմնական ձևերն էջերի հղումներով անցումն ու թերթելն է «Զետ», «Առաջ» և «Սկիզբ» կոճակներով:

6.6 Հղումները

Հանգույցի էջի ցանկացած տարր, որը կարող է ձևավորվել որպես կապ մեկ այլ էջի հետ, կոչվում են գերհղումներ կամ պարզապես հղումներ: Մի էջը կարող է պարունակել ցանկացած թվով այլ էջերի հղումներ: Հղումները ներկայացնող տարրերին սեղմելով Դուք կարող եք կապվել նույն հանգույցի մեկ այլ էջի կամ ընդհանրապես մեկ այլ հանգույցի հետ: Ցանկացած հղում պարունակում է տեղեկատվություն, որը ծառայում է որպես մեկ այլ էջի հասցե:

Հղումները հիմնականում ձևավորված են ընդգծված բառերով կամ պատկեր-նկարներով: Նաև, երբ Ձեր մկ-նիկի նշիչը անցնում է հղման տարրի վրայով, այն սլաքից ձևափոխվում է ձեռքի: Ընդգծված տեքստին սեղ-մելը կառաջացնի անցում հղված էջին:

6.7 Որոնման հնարավորն ու անհնարը

Քանզի միջազգայում ցանցում կա անսահմանափակ տեղեկատվություն, ապա այդպիսի ցանցում որոնումը պահանջում է համբերություն և հմտություններ: Միջազգային ցանցում որոնելիս Դուք շատ ավելին կշահեք, եթե հետևեք ստորև բերված մի շարք պարզագույն խորհուրդների:

Առաջարկ	Բացատրություն
Կարդացեք հանգույցի «ինչ-պես օգտվել» բաժինը	Որքան էլ որ հրարաշալի լինի որոնման համակարգը, այն պետք է օգտագործվի այնպես, ինչպես որ նախատեսել են ստեղծողները: Յուրաքանչյուր որոնման համակարգ ունի իր փնտրելու եղանակն և շարահյուսությունը: Հանգույցի «Ի՞նչպես օգտվել» բաժինը կբացատրի որոնման համակարգի օգտագործման ամենաարդյունավետ ձևը:
Եղեք ճշգրիտ	Ճշգրիտ որոնումներն օգնում են համակարգին հղվելու ամենամոտ փաստաթղթերին: Օրինակ, եթե Դուք ցանկանում եք տեղեկատվություն ստանալ գրքի մասին, որոնեք գրքի վերնագրով, այլ ոչ թե՝ հեղինակի անունով:
Եղեք համբերատար	Փորձեք որոնման մի քանի տարբերակ ևս, եթե Ձեր առաջին որոնումն անարդյունք էր:
Ստուգեք ուղղագրությունը	Նույնիսկ ամենագրագետները թույլ են տալիս տառասխալներ:
Անհրաժեշտ դեպքերում օգտագործեք մեծատառեր	Եթե որոնում եք «Հարավային Աֆրիկա» ապա մի գրեք «հարավային աֆրիկա»:
Սովորեք որոնմանն աջակցող լրացուցիչ միջոցները	Արդյունավետ որոնման համար օգտագործեք + - " " :
Ուսումնասիրեք յուրաքանչյուր որոնման համակարգ	Ուսումնասիրեք թե ինչպես է յուրաքանչյուր որոնման համակարգ մշակում հարցումները: Նման ուսումնասիրությունից Դուք կտեղեկանաք այլ լեզուներով, ազգային և հայելային հանգույցների մասին, որոնք ավելի արագ են աշխատում Ձեր տարածաշրջանում:
Խուսափեք գրելու սխալներից	Համոզվեք, որ չեք կատարել որևէ տառասխալ հասցեում կամ Ձեր հաղորդագրությունը չի մշակվի: Հատուկ ուշադրություն դարձրեք պահպանելու մեծատառ-փոքրատառերը: Ներառեք http:// Ձեր գրած հասցեներում:

7. Միջազգային ցանցի տվյալների պահպանումը

7.1 Էջանշում

Միջազգային ցանցն օգտագործելիս Դուք կհայտնաբերեք հանգույցներ, ուր կցանկանաք կրկին այցելել: Ձեզ պետք չէ գրի առնել այդ հանգույցների հասցեները: Դուք կարող եք գրանցել Ձեր նախընտրած բոլոր հանգույցները Ձեր էջանիշերի ցանկում: Եթե Դուք օգտագործում եք Internet Explorer, ապա՝

1. սեղմեք Favorites կոճակը և գրանցեք հանգույցի հասցեն,
2. այնուհետ, Favorites ընտրանու միջոցով, կարող եք կրկին հայտնվել Ձեր ցանկալի հանգույցում:

7.2 Միջազգային ցանցի տեղեկատվության պահպանում

Հանգույցի էջից տեղեկատվության պահպանման երկու տարբերակ կա՝

1. Դուք կարող եք պատճենել և այնուհետ գետեղել (copy-paste) տեքստը որևէ խմբագրական ծրագրի էջում,
2. կամ Դուք կարող եք էլ-փոստով ուղարկել այդ էջը Ձեզ կամ որևէ մեկին «File» ընտրանիում նշելով «Send Page» (Ուղարկել էջ) հրամանը՝ լրացնելով պահանջվող տվյալները:

8. Էլեկտրոնային աղբյուրների օգտագործման թերությունները

Տեխնոլոգիաների մեծամասնության հետ կապված կան դժվարություններ, սակայն դրանք առավելությունների համեմատ շատ փոքր են: Միջազգային ցանցը կարող է շատ խառը թվալ, քանզի համակարգում կա մեծ քանակությամբ տեղեկատվություն և այն փոխանցվում է Ձեզ բավականին դանդաղ: Հաղորդակցության դանդաղումը կարող է տևել մի քանի րոպե կամ մի քանի ժամ: Բացի այդ, Միջազգային ցանցից շատ կարճաժամկետ էլ-տեղեկատվությունը, որը տեղադրվում է Միջազգային ցանցում, հաճախ փոփոխվում է շատ արագ և տվյալները, որոնք Դուք տեսել եք անցյալ շաբաթ, կարող են փոխված կամ տեղափոխված լինել մեկ այլ հանգույց: Սա ևս մի պատճառ է գրառելու ձեռք բերած տվյալները կոշտ սկավառակի վրա:

9. Տեխնիկական դժվարություններ

Երբ Միջազգային ցանցում աշխատող կիրառական ծրագիրը չի անում այն, ինչ Դուք փորձում եք կատարել, ապա այն երբեմն ուղարկում է «շփոթեցնող» հաղորդագրություններ: Այս հաղորդագրությունները հասկանալի և իմանալի, թե ինչ անել տվյալ դեպքերում շատ օգտակար է: Ահա մի քանի խորհուրդ՝

1. Միալի մասին հաղորդագրության ընդհանուր մոտեցումը:

- Ուշադիր կարդացեք հաղորդագրությունը:
- Ընդունեք, որ հաղորդագրությունները ծրագրի Միջազգային ցանցում աշխատելու մի մասն են:
- Կրկնեք այն գործողությունը, որը Ձեզ բերել էր սխալի հաղորդագրությունը:
- Եթե հաղորդագրությունը կրկնվում, է ապա գրառեք այն և դիմեք որևէ մեկի օգնությանը:
- Ստուգեք հիմնական պարագաների առկայությունը: Արդյո՞ք Դուք միացած եք Միջազգային ցանցին, ճիշտ եք կապված հասցեին:
- Փորձեք կրկին:

Եթե շարունակում եք դժվարություններ ունենալ, ապա դիմեք Ձեր ծառայությունների մատակարարին:



2. No DNS entry, անվանական սպասարկման կայան չկա:

Դուք կարող է ստանաք նման հաղորդագրություն այն դեպքերում, երբ կայանը չի կարողացել գտնել Ձեր որոնած հանգույցը: Սա կարող է լինել նաև այնպիսի գործոնների դեպքում, երբ կայանների միջև կապը շատ ծանրաբեռնված է կամ Ձեր կայան անջատվել է:

3. Միալ 404

Եթե Դուք նշում եք սխալ հասցե, ապա ստանում եք նման հաղորդագրություն: Հաղորդագրությունը կասի, – «File Not Found» («Գրառումը չի գտնվել»): Սա նշանակում է, որ Ձեր կայանը գտել է Ձեր նշած հանգույցը, սակայն ոչ Ձեր նշած

հասցեն ամբողջությամբ: Դուք կարող եք փորձել փոփոխություններ կատարել հասցեի վերջում: Օրինակ, Դուք որոնում եք Netscape.com/downloads/ և ստանում եք 404 սխալի հաղորդագրությունը, Դուք կարող եք ջնջել վերջին [/downloads/](http://downloads/) մասը և որոնել Netscape.com և արդեն այդ էջում փնտրել հղում դեպի անհրաժեշտ աղբյուրը:

10. Անվտանգությունը միջազգային ցանցում

Տեղեկությունը, որը փոխանակվում է Ձեր և սպասարկող համակարգիչի միջև, կարող է բազմաթիվ համակարգիչներով անցնել և ուղղորդվել նրանց համակարգերի միջոցով: Այդ համակարգիչներից ցանկացածում Ձեր տեղեկությունը կարող է առգրավվել համակարգերի կողմից և օգտագործվել չնախատեսված և չիսազորված նպատակներով:

Պաշտպանեք Ձեր տեղեկությունները օգտվելով վտանգագերծ հանգույցներից: Ձեր կիրառված ծրագրերը հավանական է ունեն անվտանգության հայտանշման հնարավորություն, որը կարող եք գործարկել՝ վտանգից զերծ հանգույցի դեպքում տեղեկացվելու համար: Դուք նմանապես կարող եք ասել, որ ունեք վտանգից զերծ կապ ելնելով հասցեավորման (URL) տեսակից: Եթե հասցեավորումը սկսվում է «https://» («http://»-ի փոխարեն) գրառումով, ապա տվյալները ստացվում են անվտանգ սպասարկող հանգույցից: Պատուհանի ներքևի ձախ անկյունում հայտնված բանալու պատկերը նույնպես ցուցադրում է հանգույցի անվտանգությունը: Եթե բանալին կտրված է, ապա հանգույցն անվտանգ չէ:

11. Խորհուրդներ տեղեկատվության էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու համար

- Ձեր ուսումնառության ընթացքում շուտ ծանոթացեք էլեկտրոնային աղբյուրներին: Հաշվի առեք, որ համակարգչային հմտությունների ձեռքբերումը Ձեր ժամանակի ներդրումն է պահանջում:
- Մի կարծեք, որ տեղեկատվության մի աղբյուրը կարող է համապարփակ լինել:
- Տեղեկատվության էլեկտրոնային աղբյուրները Ձեր եղած ուսումնասիրությունը կլրացնեն մի այլ կողմից: Ոչ մի տեղեկատվական աղբյուր լրիվ չի կարող լինել: Օգտագործեք Միջազգային ցանցի տեղեկությունները այլ տեղեկությունների լրացման համար:
- Մի՛ անհանգստացեք, Դուք ոչինչ չեք կարող փչացնել: Համակարգիչին քիչ ծանոթ մարդիկ անհանգստանում են, որ կարող են սխալվել և վնասել մեքենային: Համակարգիչները ճկուն են: Էլեկտրոնային տվյալներն էլ լավագույնս պաշտպանված են: Ամենավատը, որ կարող է պատահել, դա համակարգիչի «սառնել» է («կախվել» է), այսինքն Ձեր համակարգիչը հրամաններին՝ մկնիկի կամ ստեղնաշարի ստեղնի սեղմումին, երկար ժամանակ չի արձագանքում: Դուք պետք է անջատեք համակարգիչը և սկսեք նորից:
- Որպես սկսնակ ենթադրեք, որ բոլոր տվյալները պաշտպանված են:
- Մի ընկալեք այն, ինչ կարդում եք ցանցի էջերում, որպես բացարձակ ճշմարտություն: Թերահավատությամբ և քննադատաբար ընդունեք ցանցի էջերում տեղադրված ցանկացած կյուբ: Ինչ որ մեկը ժամանակին ասել է, որ ցանցից տեղեկություն ստանալը նման է հրդեհը մարելու ջրանետ ծորակից խմելու ջուր ստանալուն՝ Դուք չեք կարող իմանալ, թե աղբյուրն ինչն է:

12. Օգտակար հանգույցներ

Կազմակերպություններ և ինստիտուտներ	
Centers for Disease Control and Prevention (CDC) Համաճարակների վերահսկման և կանխման կենտրոններ	http://www.cdc.gov/
The Cochrane Collaboration Քոչրենի համագործակցությունը	http://www.cochrane.org/ Քոչրենի համագործակցությունը միջազգային կազմակերպություն է, որ նպատակ ունի օգնելու մարդկանց առողջապահության մասին լավատեղյակ որոշումներ կայացնել՝ հասանելի դարձնելով առողջապահական միջամտությունների ազդեցությունների մասին պարբերական տեղեկատվությունը:
Harvard AIDS Institute Հարվարդի ՁԻԱՀ-ի ինստիտուտ	http://www.hsph.harvard.edu/hai/
Healthlink Worldwide	http://www.healthlink.org.uk/ Healthlink Worldwide - Աշխատում է բարելավել աղքատ և խոցելի համայնքների առողջությունը ուժեղացնելով տեղեկատվության տրամադրումը, օգտագործումը և ազդեցությունը:
National Library of Medicine Բժշկության ազգային գրադարան	http://www.nlm.nih.gov/
Program for Appropriate Technology in Health Առողջության համապատասխան տեխնոլոգիաների ծրագիր	http://www.path.org/ PATH (Ուղի), Բնապահպանությանը Համապատասխան Առողջապահական Տեխնոլոգիաների ծրագիր, միջազգային ոչ առևտրային կազմակերպություն է, որի առաքելությունը առողջության, հատկապես կանանց և երեխաների առողջության բարելավումն է:
UN AIDS ՄԱԿ Օգնություն	http://www.unaids.org/
World Health Organization Առողջապահության համաշխարհային կազմակերպություն	http://www.who.org/
Չարգացման միջազգային կազմակերպություններ	
International Development Research Council Միջազգային զարգացման ուսումնասիրությունների խորհուրդ	http://www.idrc.org/
UNICEF ՅՈՒՆԻՍԵՖ	http://www.unicef.org/
United Nations -UN Միացյալ Ազգերի Կազմակերպություն – ՄԱԿ	http://www.un.org
United Nations Development Programme ՄԱԿ-ի Չարգացման ծրագրեր	http://www.undp.org/
United States Agency for International Development Միացյալ Նահանգների Միջազգային Չարգացման Գործակալություն	http://www.info.usaid.gov/
World Bank Համաշխարհային Բանկ	http://www.worldbank.org/

Որոշակի տեղեկատվություն	
AEGIS - ՁԻԱՅ-ի դեմ պայքարին նվիրված աշխարհում ամենամեծ հանգույցը	http://www.aegis.com/
Infectious Disease Specialty Supersite Վարակիչ հիվանդությունների որակավորման հանգույց	http://pages.prodigy.net/pdeziel/
Malaria: An Online Resource Մալարիա: Միջազգային ցանցի աղբյուր	http://www.rph.wa.gov.au/labs/haem/malaria/index.html
Pediatric Infectious Diseases Մանկական վարակիչ հիվանդություններ	http://www.pedid.uthscsa.edu/
Reproductive Health Outlook (RHO) Վերարտադրողական առողջապահության ուրվագծեր	http://www.rho.org/
Էլեկտրոնային կապ	
African Internet Connectivity Միջազգային ցանցի Աֆրիկյան համակցումներ	http://www3.wn.apc.org/africa/
Network Startup Resource Center Ցանցերի գործարկման գիտելիքների կենտրոն	http://www.nsrc.org/
Health Statistics by Country Առողջապահական վիճակագրություն ըստ երկրների	http://www.worldbank.org/data/countrydata/countrydata.html http://www.odci.gov/cia/publications/factbook/country.html http://www.unicef.org/statis/ http://www.who.int/whr/
Բժշկական ամսագրեր	
African Journal of Reproductive Health Վերարտադրողական առողջապահության Աֆրիկյան ամսագիր	http://www.hsph.harvard.edu/ajrh/index.html
British Medical Journal Բրիտանական բժշկական ամսագիր	http://www.bmj.com/
Journal of the American Medical Association Ամերիկյան բժշկական միության ամսագիր	http://www.jama.com/
The New England Journal of Medicine Նոր Անգլիայի բժշկական ամսագիր	http://www.nejm.com/
The Lancet Լանցետ	http://www.thelancet.com/
Internet Directory and Resource Site: Medical Journals Համացանցի հղումներ և տեղեկատվական հանգույցներ՝ բժշկական ամսագրեր	http://www.sciencekomm.at/journals/medicine/med-bio.html
Համագումարների հայտարարություններ	
Doctor's Guide to Medical Conferences and Meetings Բժշկական համագումարների և ժողովների ուղեցույց	http://www.pslgroup.com/MEDCONF.HTM

Բացատրական բառարան

Bookmark - Էջանիշ – Համացանցի ընտրած էջի հասցեի (հղման) գրառում: Ցանցախույզ (համացանցի ուղեկից) ծրագրում Դուք կարող եք հիշել Ձեզ հետաքրքրող էջերն այնպես, որ հետո կարողանաք հեշտությամբ դիմել նրանց:

Browser - Ցանցախույզ, Ցանցանավ, Ուղեկից – Համացանցով շրջելու ծրագրի կարճ անունն է՝ ծրագրային գործիք, որի օգնությամբ կարելի է նավարկել (շրջել) համացանցով: Այժմ համացանցով շրջելու Internet Explorer և Netscape Communicator ծրագրերն ամենատարածված են:

CD-ROM (Compact Disk - Read Only Memory) – Օպտիկական սկավառակ (Միայն կարդացվող հիշողություն)
– Օպտիկական երիզի տեսակ է, որն ընդունակ է մեծ քանակով տվյալներ պահել:

Chat Room – Չրուցարան, Հյուրասենյակ – Տեղ (հյուրասենյակ) համացանցում, ուր մարդիկ այցելում (հյուրընկալվում) են «գրուցելու» այլ այցելուների (հյուրերի) հետ: Սովորաբար սենյակները բաշխվում են ըստ թեմատիկ հետաքրքրությունների: Երբ Դուք գտնվում եք քննարկումների սենյակում, Դուք կարող եք դիտարկել արդեն տեղի ունեցած բոլոր երկխոսությունները, որոնք միանգամից երևում են Ձեր համակարգիչի պատուհանին: Մասնավոր գրույցներ վարելու համար Դուք կարող եք նաև որոշ հյուրերով անջատ հավաքվել որոշակի առանձնասենյակում, որտեղ միայն Դուք և այս մի քանի մասնակիցները կարող եք գրել իրար:

Cookie – Անհատական համարանիշ (բառացի նշանակում է թխվածք) – Առաջին այցելության ժամանակ որոշ հանգույցների կողմից Ձեզ վերագրվող անհատական տվյալներ են, որոնք կիրառվում են Ձեր ընթացիկ և հետագա այցելությունների անհատական վերահսկման և ուղղորդման համար: Այսպիսի անհատական տվյալների վերագրման դեպքերի մասին, որպես կանոն, ծրագրերը Ձեզ չեն տեղեկացնում և գրառում են կատարում Ձեր համակարգիչում առանց թույլտվության: Անհատական համարանիշի օգնությամբ Ձեզ ճանաչելու նպատակն այն է, որ կազմակերպվի Ձեր նավարկության սահուն ընթացքը, հետևեն այցելությանը էջերի շրջայցի և որոնվող թեմաների ժամանակ և Ձեր նախասիրությունները հաշվի առնելու ընդհանուր զգացողություն ստեղծեն: Դա Ձեր նավարկությունը կդարձնի ավելի հարմար, արագ, առավել անձնավորված և ավելի արդյունավետ: Դա կարող է կիրառվել նաև Ձեր էլեկտրոնային հասցեի ձեռք բերման և առևտրային (շուկայավարման կամ գովազդի) նպատակներով օգտագործման համար: Դուք կարող եք Ձեր ցանցախույզի դրվածքներում նշել, որ այն նախապես զգուշացնի վերագրվող անհատական համարանիշի գրանցման մասին, որպեսզի որոշում ընդունվի գրանցել տվյալ համարանիշը կամ՝ ոչ և կամ արգելել դա ընդհանրապես: Ստուգեք Ձեր ցանցախույզի դրվածքները: Ի նկատի ունեցեք, որ որոշ վտանգագերծ հանգույցներ չեն սպասարկի, եթե չեք ընդունել իրենց կողմից տրված անհատական համարանիշը:

Cyberspace – Կիբերսիեզերք, Կիբերտարածություն (Կիբերնետիկական) – Այս եզրը սովորաբար վերագրվում է Միջազգային ցանցին:

Domain Name – Հանգույցի (տարածքի) անուն – Համացանցում առնձնացված տարածքի ամենաբարձր մակարդակի անունը, որը չի կարող վերագրվել նրա առանձին հատվածներին: Տարածքը կարող է ձևավորվել բազմաթիվ տարբեր համակարգիչներով, որոնք կարող են տարբեր տեղերում և նույնիսկ տարբեր երկրներում լինել: Անկախ այս բաշխումից, էջերի հասցեավորումը կատարվում է նույն տարածքային անվան հիման վրա: Օրինակ, տարածքի FreeNet.Am անվան հիման վրա ստեղծված էլ-էջերի www.FreeNet.Am և էլ-փոստի EMail.FreeNet.Am հանգույցները տարբեր համակարգիչներ են, իսկ www.US.Freenet.Am հանգույցը գտնվում է ԱՄՆ-ում: Անկախ այս ամենից, որպես ամբողջություն այն ընկալվում է որպես մեկ հանգույցի էջերի համախումբ՝ անկախ հանգույցը կազմող համակարգիչների քանակից և նրանց տարածքային բաշխումից:

Download - Բեռի փոխադրում, բեռնում, ընդունում – Միջազգային ցանցով տեղեկատվության կամ տվյալների տեղափոխություն (բեռնում, ընդունում) Ձեր համակարգիչ: Ամեն անգամ, երբ Դուք հրահանգում եք էլ-փոստի ծրագրին ստանալ Ձեր էլ-նամակները, Դուք մատակարարի էլ-փոստակղից նամակներն ընդունում (տեղափոխում, բեռնում) եք Ձեր համակարգիչում: Դուք կարող եք նաև բեռնել Ձեր համակարգիչը ծրագրերով, սակայն զգույշ եղեք այն դեպքերում, երբ տեղափոխում եք գրառումներ կամ ծրագրեր Ձեզ անծանոթ հանգույցներից: Դուք կարող է վիրուսներ տեղափոխեք և իմանաք այդ մասին միայն այն ժամանակ, երբ արդեն շատ ուշ կլինի:

E-mail – Էլեկտրոնային փոստ – Էլեկտրոնային փոստ: Այս միջոցը սովորաբար տրամադրվում է Ձեր Միջազգային ցանցի ծառայությունների մատակարարը: Այն հնարավորություն է ստեղծում Միջազգային ցանցով ուղարկել և ստանալ փոստային հաղորդագրություններ:

File – Գրառում – Էլեկտրոնային տվյալների և փաստաթղթերի գրառումներ:

FTP – File Transfer Protocol – Գրառումների Հաղորդման Արձանագրություն – FTP՝ հապավում. Այս միջոցն օգտագործվում է գրառումները մի համակարգիչից մյուսը Միջազգային ցանցով տեղափոխելու համար: Օրինակ, բեռնելու համար Ձեր էջերով այն հանգույցը, որը Դուք պատրաստել եք Միջազգային ցանցում ուրիշներին ցուցադրելու համար, Դուք օգտագործում եք FTP:

HTML - Hypertext Mark-up Language - Գերտեքստի Նշագրման Լեզու - HTML լեզուն - ծրագրավորման իսկական լեզու է, բայց տեքստում կատարվող նշումների միջոցով տեքստի ձև ավորման եղանակ է: Օրինակ, HTML լեզուն համապատասխան նշումներով թույլ է տալիս բառը ներկայացնել թավ կամ ընդգծված տեսքով: Նախկինում շատ ծրագրեր տեքստերի մշակման համար սովորաբար ընտրում էին այս ճանապարհը: HTML լեզուն հիմք է համացանցում շատ էջերի ներկայացման համար:

http - Hypertext Transfer Protocol - Գերտեքստի Փոխանցման Արձանագրություն - Արձանագրություն, որով մի համակարգիչը փոխանցում է մյուսին HTML լեզվով ներկայացված էջերն ու այդ էջերին առնչվող տվյալները: Դուք կնկատեք, որ համացանցի էջերի հասցեների մեծամասնությունը սկսվում է "http://" հրահանգով:

Hypertext - Գերտեքստ - Համացանցի էջի տեքստը, որով օգտվողը կապվում է համացանցի այլ էջերի հետ տեքստում առակա հղումների միջոցով: Սովորական տեքստից տարբերելու համար գերտեքստը կամ հղումները սովորաբար ցուցադրվում են այլ գույնով և կամ ընդգծված տեսքով:

Host - Տեր, Կրող - Համակարգիչը, որը ֆիզիկապես կրում է հանգույցի էջերն ու տվյալները:

Icon - Պատկեր - Համակարգիչի պաստառին ներկայացված պատկեր կան նշան, որն առնչվում է որևէ հրամանի, գործիքի կամ ծրագրի:

ISP - Internet Service Provider - Միջազգային ցանցի ծառայությունների մատակարար - Սա Ձեր Միջազգային ցանցի հետ կապն ապահովողն է: Դուք ամեն անգամ օգտվում եք մատակարարի ծառայություններից, երբ ամեն անգամ մուտ եք գործում Միջազգային ցանց:

InterNet - International Network - Միջազգային ցանց - Այս էլեկտրոնային ցանցը իրար է միացնում կրող համակարգիչներն այնպես, որ Դուք կարողանաք համացանցի մի էջից անցնել մյուսին:

Java - Ջավա - Ծրագրավորման լեզու, որն օգտագործվում է համացանցի էջերում ներդրվող կիրառական փոքր ծրագրերի ստեղծման համար: Այն կիրառվում է, երբ օգտվողը դիմում է համացանցի էջին կամ կամ սեղմում է էջի ինչ-որ մասին: Եթե Դուք այցելել եք համացանցի հանգույցներ, որոնց դիմելուց լսում եք նվագի ձայներ, կենդանանում են պաստառով վազող պատկերներ կամ ցուցադրվում է վազող տողերով տեքստ, ապա Դուք տեսել եք, թե ինչ է Ջավայով ծրագրած էջը:

Keyword - Բանալի բառ - Համացանցի էջերում որոնման թեմային առնչվող բառ կամ բառեր:

Link - Կապ - (տես՝ Գերտեքստ, Հղում)

Load - Բեռնել - Բեռն ընդունել-հանձնելու կարծ ձևն է: Երբ ինչ-որ մեկը հարցնում է, թե արդյոք երկար է բեռնվում էջը ապա նա նկատի ունի ժամանակը, որի ընթացքում այն ամբողջությամբ կհայտնվի պաստառին: Երբ համացանցի էջերը բեռնվում են դանդաղ, ապա դա նշանակում է, որ Ձեր համակարգիչի պաստառին ամբողջությամբ երևալու համար շատ ժամանակ է անհրաժեշտ:

Location - Տեղակայում - Հասցե Միջազգային ցանցում:

Modem - Ձև ափոխիչ - Ձև ափոխիչների օգնությամբ համակարգիչները կարող են իրար տեղեկատվություն փոխանցել սովորական հեռախոսակապի միջոցով: Այլ դեպքերում օգտագործվում են այլ ձև ափոխիչներ: Մասնավորապես, առանձնացված պղնձալար գծերով տվյալների փոխանցման համար կիրառվում են xDSL ձև ափոխիչներ, իսկ եթե սովորական ռադիոկապի ձև ափոխիչներ:

Net - Ցանց - Հեռահաղորդակցության ծառայությունների փոխանակման նպատակով կապուղիների և համակցված ուղղորդիչների և բաշխիչների համակարգ:

Netiquette - Ցանցի վարքականոն - Ցանցից օգտվելու պատշաճ վարք: Միջազգային ցանցի վարքականոն:

NewsGroups or UseNet - Նորություններ խմբեր կամ Օգտվողների ցանց - Սրանք խմբեր են, որոնք հաճախ բոլորովին կապ չունեն լրատվական նորությունների հետ: Սրանք իրականում Միջազգային ցանցի խմբեր են, որոնք կազմվել են կիսելու իրենց հետաքրքրությունները շարունակական քննարկումներում:

Online - Առկա կապ (Կապի մեջ լինել, Գծում լինել, Երկխոսության մեջ լինել) - Միջազգային ցանցի հետ կապի առկայություն:

Protocol - Արջանագրություն - Կանոնների հավաքածու, համաձայն որի համակարգիչները կարող են կապվել իրար Միջազգային ցանցով:

Site - Հանգույց - Միջազգային ցանցի հանգույց: Համացանցի ցանկացած էջ կայանման տեղ ունի և այդ տեղը կոչվում է հանգույց: Ամեն մի հանգույց ունի հասցե, որը սովորաբար սկսվում է "http://" հրահանգով:

Spam (or Spamming) – Հեղեղ (կամ Հեղեղել) – Միջազգային ցանցի փոստով անպետք, անցանկալի հաղորդագրություն: Նույն բովանդակությամբ հաղորդագրություններ են ուղարկվում (հեղեղում) շատ մեծ թվով մարդկանց, հիմնականում, գովազդելու նպատակով: Համակարգիչների վիրուսային համաճարակների դեպքում հաղորդագրությունների հեղեղները կարող են իրապես խափանել տեղային և, նույնիսկ, Միջազգային ցանցի աշխատանքը:

Surfing – Նավարկել – Միջազգային ցանցով շրջագայության ընթացքը:

Toolbar – Գործիքների դարակ – Գործիքների պատկերների և կոճակների շարք, սովորաբար պաստառի վերևում, որպեսզի կարճ ճանապարհով որոշ գործողություններ կատարվեն և ծրագրեր գործարկվեն:

URL - Uniform Resource Locator - Միջազգային ցանցի հասցե – Հապավում է: Սա համացանցի ամեն հանգույցի հասցեն է: Սովորաբար սկսվում է "http://" հրահանգով:

Upload - Բեռնում – Միջազգային ցանցով Ձեր համակարգիչից մի այլ համակարգիչ տեղեկատվության փոխանցման ընթացքը: Ամեն անգամ, երբ ուղարկում եք էլեկտրոնային փոստը, Դուք հաղորդագրություններով բեռնում եք ստացողի համակարգիչը:

User ID – Օգտվողի նույնացուցիչ – Սա առանձնահատուկ նույնացուցիչ է (նման Ձեր համակարգիչ մուտք գործելու անունին), որն օգտագործում եք համակարգիչում Ձեզ նույնացնել-ճանաչելու համար:

Virus – Վիրուս – Վիրուսը կարող է ջնջել Ձեր համակարգիչում եղած որոշ տեղեկություններ և խապառ վերացնել Ձեր ողջ կուտակած տեղեկատվությունն ու բոլոր տվյալները: Դուք կարող է ոչ միտումնալից բեռնեք վիրուսը համացանցի էջից կամ ստանաք այն ինչ-որ մեկի տված ճկուն սկավառակով: Ճիշտ է, կան հավիրուսային ծրագրեր, որոնք կանխում են արդեն հայտնի վիրուսների տարածումը, սակայն ամեն օր հայտնվում են նորանոր վիրուսներ: Վարակից լավագույն պաշտպանությունը դա մեծ զգուշությունն է, որը պետք է ցուցաբերվի, որպեսզի խուսափեք համացանցի էջերից բեռնել անծանոթ ծրագրեր կամ տվյալներ:

WAIS – Wide Area Information System – Տեղեկատվատվության Համակարգի Ընդլայնված Տարածք – Հապավում, որը հիմնականում նշանակում է շատ մեծ շտեմարանների համախումբ: Սա մշակված էր WAIS միավորման կողմից որպես մեծ շտեմարաններին դիմելու եղանակ:

Web Browser – Ցանցախույզ, Ցանցանավ, Ցանցի Ուղեկից – տես՝ **Browser**

Web Page – Համացանցի էջ – Երբ դիտում եք համացանցի հանգույցի էջը, ապա նույնն է, թե Դուք նայում եք համացանցի էջը: Հանգույցը կարող է պարունակել բազմաթիվ էջեր, որոնցից առաջինը կոչվում է հանգույցի հիմնական կամ սկզբնական էջ:

WWW – World Wide Web – Համաշխարհային Համընգհանուր Ցանց – ՀՀՑ – Աշխարհասփյուռ հանգույցների համացանց - Համաշխարհային Սարդոստյանը, որը համացանցի էջերի փոխադարձ հղումների գործվածք է:

Ներկայացված է <http://www.geocities.com/FashionAvenue/4869/desc.html> էջում:
Խմբագրությամբ Sabre Foundation, Inc. and SatelLife, Inc.